№ 209 Նոյեմբերի 25 (Դեկտեմբերի 7) 1880 Նոյեմբերի 25 (Դեկտեմբերի 7) № 209

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ. կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Օտարաքաղաքացիք դիմում են ադրեսի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով:
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թուին

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրօգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետևեալ օրերից)·

ՊՐՕԳՐԱՄՄԱ· I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ·

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 րուբլ, կէս տարվան 6 ր., հինգ ամս. 5 ր., չորս ամս. 4 ր., երեք ամս. 3. ր. երկու ամս. 2 ր. և մի ամս. 1 րուբլ·

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հողերի խնդիրը·—Ներքին տեսութիւն· Դարձեալ հայ ուսանողութեան մասին· Նամակ Ախալցխայից· Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին· Ներքին լուրեր·—Արտաքին տեսութիւն· Բրդական ապստամբութիւն· Նամակ Պարսկաստանից·—«Մշակի» հեռագիրներ·—Յայտարարութիւններ·

ՀՈՂԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Յայտնի է որ այժմ Թիւրքաց Հայաստանում շատ էժան գներով ծախվում են հողերը, որոնք զանազան քիւրդ թէ թիւրք կալուածատէրերի ձեռքումն էին: Պատերազմից և սովից յետոյ կատարելապէս ընկնելով գնի մէջ, այդ հողերը էժան գներով առաջարկվում են ցանկացողներին: Պատերազմը և սովը շատ կոտորածներ արաւ, շատերը հին կալուածատէրերից գաղթեցին Հայաստանից դուրս և նրանց հողերը շատ տեղ ընկան նոյն իսկ հայ գիւղացիների ձեռքը: Բայց և սրանք դժուարանում են պահել այդ հողերը և սկսել են արդէն իրանց կողմից ծախել այդ կալուածները ռուսաստանցի կամ պարսկաստանցի ունևոր հայերին, կամ հարուստ օտարազգիներին, օրինակ անգլիացիներին:

Մենք անհրաժեշտ ենք համարում Թիւրքաց հայերի և Կ. Պօլսի հայոց ազգային ժողովի ուշադրութիւնը դարձնել այն հանգամանքի վրա, որ Թիւրքիայի հայերը զգոյշ լինեն ծախելու իրանց հողերը այնպիսի հարուստներին, որոնք կարող են գնել ամբողջ կէս վիլայէթներ և հէնց գործի սկզբում հիմնել Թիւրքաց Հայաստանում մի տեսակ հողային բարօնութիւն ի վնաս հայ գիւղացիների: Մի հայ հարուստ, որ ահագին կալուածներ կունենայ, աւելի լաւ չի վարվի հայ գիւղացու հետ, քան թէ մի քիւրդ կամ թիւրք հարստահարիչ բէկ: Հողեր և անշարժ կայքեր առնելը Հայաստանում այն ժամանակ միայն օգտաւէտ կարող է համարվել, երբ երկիրը բաժանված կը լինի հարիւր հազար տէրերի մէջ, բաժանված կը լինի անթիւ մանր տնտեսութիւնների վրա, բայց ոչ թէ ամբողջ Հայաստանը երկու կամ երեք անձանց ձեռքում կը լինի, որոնք իրանց վաշխառուական մեքենայութիւնները կը սարքեն այդ երկրի մէջ, կապելով կը տան իրանց հողերը գիւղացիներին և քաղքատացնեն կատարելապէս երկրագործ հայ բընիկ ժողովուրդը:

Ընթերցողը կարդացած կը լինի «Մշակ» անցեալ համարի ներքին լուրերում, որ այդ տեսակ վաշխառուները արդէն սկսել են գնել ահագին հողեր Թիւրքաց Հայաստանում:

Հարկաւոր է զգոյշ լինել, կրկնում ենք, հարկաւոր է աշխատել, որ Հայաստանը չը դառնայ Բալթեան նահանգի պէս մի երկիր, կամ մի տեսակ Իրլանդիա: Բայց դժբաղդաբար այդ նպատակին ձգտողները, այսինքն Թիւրքաց Հայաստանի հայ բնակիչներին հողագուրկ դարձնելու ջանք անողները նոյն իսկ այն մեր քրմեր և մայրաքաղաքների վաշխառուներն են, որոնք այսքան ժամանակ համարվում էին հայոց ինտելլիգենցիայի և հայոց ուսանողութեան կողմից օրինակելի ազգասէրներ և ազգի բարերարներ, դրանք, որոնք ճարպիկ կերպով բարոյապէս և նիւթապէս տարիների ընթացքում հարստահարելով հայ հասարակութիւնը, կարողացել են իրանց ձևացնել նրա բարերարներ:

Շատ հեշտ է իրան բարերար ձևացնել. մի կողմից հարստահարել հասարակութիւնը, կողոպտել, գողանալ, թուղթ խաղալու մէջ խարդախութիւններ անել, ահագին տոկոսներ վերցնել փոխ տուած գումարներից, աղքատացնել ամբողջ ընտանիքներ, մարդիկներից կաշին պլոկել,—և մի և նոյն ժամանակ մի քանի փշրանքներ ընծայել յօգուտ այս կամ այն դպրոցի, պահել մի երկու ուսանողին իր հաշւով... Ժամանակ է մերկացնել ազգասիրական դիմակը կրող այդ աւազակային խումբը և գոնէ աշխատել, որ ազգին անարգանք բերող այդ հռչակված մեծապատիւ աւազակ բարերարները չը փոխադրեն իրանց հարստահարութեան յենակէտը դէպի Թիւրքաց Հայաստանը: Բաւական է ինչ վնաս տուեցին այդ մարդիկ մեզանում, գոնէ զգուշացնենք Թիւրքաց հայերին եւրոպական փայլը կրող այդ ամենաստոր աւազակային խմբից, որի ներկայութիւնը մի ազգի մէջ ամեն մի ազգին ամօթ և արատ կը բերէր:

Ուրեմն համակրելով Թիւրքաց Հայաստանի հողեր գնելու պրինցիպին, հարկաւոր է աշխատել, որ հողերը անցնեն բազմութեան ձեռքը և ոչ թէ մի քանի հարստահարող անհատների, գիշատիչ կենդանիների ձեռքը:

Ժամանակ է հասկացնել ժողովրդին ինչ բան է բարոյականութիւն և ինչ բան է անբարոյականութիւն:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՐՁԵԱԼ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հայ ուսանողութեան վրա ստէպ խօսելը հարկաւոր է ոչ միայն նրա համար որ շատ հայեր կարող լինեն աւելի կատարեալ հասկացողութիւն կազմել մայրաքաղաքներում տարիներով մաշվող իրանց սրտին մօտիկ էակների մասին, այլ և այն պատճառով, որ ամբողջ հայ հասարակութիւնը նոյնպէս կարողանայ ճանաչել այն ապագայ հերոսներին, որոնք հերթը հասած ժամանակը, անշուշտ պիտի բերանները բանան և իրանց գլխաւորների ապահովութեամբ հեղինակաւոր դատողութիւն տան այս ինչ, այն ինչ իրանց ուժից վեր նիւթի վրա...

Գիմնազիստների այդ ողորմելի ցեղերը, տարիներով լսելով զանազան դժուարամարս գիտութիւնների դասեր, այնչափ բթանում են, որ ի վերջոյ կորցնում են բոլոր ընդունակութիւնը մի ամենատարրական խորհողութիւն անգամ ըմբռնել. օրինակ, նոքա չեն կարող խելք հասցնել թէ ինչպէս մի մարդ, տարիներ ապրելով նոցա շրջանին կից, հետամուտ լինելով նոցա առօրեայ ինտերեսներին, կենցաղավարութեան և յարաբերութիւններին, ճանաչելով նոցա մէջ հեղինակաւոր համարվածների աշխարհահայեցողութիւնը, լօգիկայի և զարգացման աստիճանը, կարող է դատողութիւն տալ և այնպիսիների վրա, որոնց հետ նա անձամբ չէ ծանօթ, երբեք առ երես չէ տեսել, չէ պատահել, չէ խօսել, չէ ծիծաղել...

Հայ ուսանողը տարիներով իր հոգեհան պրօֆեսորի առաջ անալօգիական կերպով հազար ու մէկ օրէնքներ բացատրելուց յետ, մնում է այնչափ հրէշաւոր հասկացողութեան մէջ խրված, որ չէ կարող միտք հասցնել թէ մի քանի նոյնանման օրինակների անալօգիայով կարելի կը լինի խօսել և ընդհանրապէս ամեն առարկայի մասին էլ առանց երկիւղ կրելու, թէ մեծ սխալմունքների մէջ կընկնի այդպէս խօսող մարդը...

Հայ ուսանողութեան միւս այլանդակ գանգատը նորանումն է կայանում թէ՝ եթէ հինգ տարի առաջ աւարտած ուսանողները անզարգացած են եղել, բարոյապէս ընկած և մտաւորապէս բթացած, նոյնը չէ կարելի ասել և այժմեան հայ ուսանողների համար: Երբ հայ ընտանեաց մէջ տիրապետող անճոռնի դաստիարակութիւնը մնում է և դեռ տասնեակ տարիներ կը մնայ մի և նոյնը, երբ գիմնազիական պրօգրամն և բոլոր ուսումնական կազմակերպութիւնը չէ ենթարկվել հիմնական փոփոխութեան, երբ մայրաքաղաքներում կըրթվող հայ ուսանողութիւնը ապրել է և միշտ կապրի իրան սահմանափակ ասիական շրջանում, լոկ միմեանց յարաբերութիւններով կապված և բոլոր ազատ ժամանակը ոչխարի հօտի պէս համախմբված միայն իրանց ճիւաղական ընկերութեան մէջ, իրանց չնչին և գրօշական շահերով գրաւված, անիմաստութիւն չէ՞ արդեօք որ և իցէ մի այնպիսի գանգատ, որը յայտնում են նոքա:

Միւս ոչ պակաս անիմաստ գանգատ յայտնում են նոքա, ինչպէս շատ անգամ լսել ենք, այն անձինքների դէմ, որոնք «Մշակի» միջոցով պախարակում են նոցա երբեմնապէս, նոցա անտարբերութեան մասին դէպի իրանց ազգային պարտաւորութիւնները: Հայ ուսանողը հասնում է այն խայտառակ կէտին, որ ասում է. „ես ոչինչ չեմ շինում, որովհետև այս ինչ անձինք ի զուր տեղը յարձակվում են ինձ վրա՛՛ Այս խօսքերը հերիք չեն ցոյց տալու համար, թէ հայ ուսանողը ոչնչով չէ տարբերվում այն անկիրթ և լեթված յակոտից, որը կամենալով իր վրա որ և իցէ մի սկանդալով դարձնել հաւաքված հիւրերի ուշադրութիւնը, շատ անգամ ընկնում է գետինը և ոտերով ու գլխով ծեծկվտում թէ ինչու նրա վրա նայեց կամ նրա հետ խօսեց սան հիւրերից մինը...

Միւս կողմից մենք ևս բոլորովին համաձայն ենք, որ հայ ուսանողութիւնը ընդհանրապէս ոչինչ չէ կարող շինել, քանի որ գտնվում է իրան այժմեան անմխիթար վիճակի մէջ, որովհետև նրանց մէջ դժուար թէ կայ հարիւրից երեք մարդ, որը բացի իր առարկաների հոգսից և դիպլօմ ստանալու ինտերեսից, ունենայ մի այլ ընդհանուր և աւելի բարձր ինտերես. Հայ ուսանողը ոչ թէ ինտէլլեգէնցիայի բազմակողմանի և ընդհանուր մարդկային ձգտումներով է ապրում, այլ կօշեգործի, կօշկակարի, մանրավաճառի և որ և իցէ մի արհեստաւորի օրինակով, նրա ուշքը, միտքը, ձգտումները և վերջնական նպատակը ամփոփած է միայն նրա վրա, որ շուտով ստանայ ուսեալի պաշտօնական վկայաթուղթը, էլ բնաւ չը հոգալով ըմբռնել սերտած գիտութիւնների ազատ և լայնածաւալ հոգին. Հայ ուսանողը մեծացել է իր հօր սանը կօպէկական հոգով, նոյն նեղ հոգով է դուրս գալիս ու կեանք մտնում համալսարանի պատերից կանդիդատների, մագիստրոնների և դոկտօրների դիպլօմով...

Ասածիս ամենապերճ ապացոյցը այն կարող է լինել, որ քիչ կարելի է գտնել մայրաքաղաքում կրթվող հայ ուսանող, որի հետ խօսես ժամանակակից հասարակական և քաղաքական երևոյթների և շարժումների վրա, որ նա ցանկութիւն ունենայ կամ կարող լինի յայտնել քեզ մի լուրջ հայեացք, մի լօգիկական և հմուտ դատողութիւն: Հայ ուսանողը, եթէ նորան ատմիսներով անգամ փորձէք, ամեն քայլափոխում ձեզ այնպիսի խորթ, խելքից դուրս և լօգիկայից զուրկ այլանդակ բացատրութիւններ կը տայ որ և իցէ մի կատարվող քաղաքական իրողութեան վրա, որ մարդկը մնայ շուարված, ամենաանկեղծ կերպով հարց առաջարկելով իր մտքում. „արդեօք այս ուսանողի ուղեղը իր տեղի՞ն է, թէ մի բան է պատահել նորա հետ: Ասեցէք ի՞նչպէս կարելի է պահանջել, որ այսպիսի մինը վերանէ գրիչը և հայոց կամ ռուսաց լեզւով տասը տող վայելուչ դատողութիւններ արտայայտէ այն նիւթի վրա, որը չունէ ոչինչ կապ նորա առարկաների հետ... Չէ՞ որ մեծ բարութիւն կը լինի հայ հասարակութեան որ այսպիսի մինը ինչ ուզում է անէ, գէթ իր խելքից դուրս բանին ձեռք չը տայ... դարձեալ աւելորդ եմ համարում ասել, որ պայծառ բացառութիւնները այնչափ խօսում են իրանք իրանց օգտին հրապարակապէս, որ նոցա վրա երբէք չէ կարող լինել մեր խօսքը...

Այս ամենից յետ զարմանալի չէ՞ արդեօք այն յանդուգն ինքնավստահութիւնը, որը ցոյց է տալիս հայ ուսանողը, երբ մի փորձող մարդ սկսում է խօսել նորա հետ կամ ծաղրաբար գովելով նորան, կամ թէ յարձակվելով նորա վրա: Այս երկու դէպքումն էլ հայ ուսանողը մտնում է իրան իր կատարեալ պատկերի մէջ—նա յայտնըվում է մի տարօրինակ մարդ, որը կեանքից հեռանալով կորցրել է իր բոլոր գործնական միտքը, իսկ տեսականապէս այնչափ է զարգացել, որ խօսած ժամանակը ամենահամեստ մարդուց անգամ չէ կարող լսել ուրիշ անուն, բացի անձնապատիւ իմաստակի և կատարեալ իդիոտի: Ահա այսպիսիներին են դուրս թողնում խեղճ հայ ազգի գլխին պատուհաս մեր բարձրագոյն ճեմարանները... Ով մեզ կասկածում է հէնց մի փոքր կրքի մէջ, թող նայէ նրանց վրա, որոնք արդէն ազատ պտտում են կեանքի ասպարիզում, նոյնպէս և նրանց վրա, որոնք պատրաստվում են մտնել շուտով այն երամական դասի մէջ, որ ասվում է հայ ինտելլեգենցիա....

Գաս. Եաղուբեան

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

—

5 Նոյեմբերի

«Մշակի» № 150-ում մի առ մի նկարագրված էր տեղիս հայ-կաթօլիկաց ծխական ուսումնարանի ներկայ ողորմելի վիճակը, որի հնաշէն և փոքր դասատան խոնաւութիւնը, աշակերտաց համար անբաւական լինելը անուշադիր էր մնացած: Այդ տեսակ վարմունքը ուսումնարանի մը հետ, վատ ապագայ էր խոստանում և կամ բոլորովին փակվել էր սպառնում և կամ մի ստորին աստիճանի գիւղական ուսումնարանի հետ էր հաւասարեցնում նորան:

Մի քանի ինքնահաւան անձինք յանցանքը բառնում էին տէր-Ս. Շ.-ի վրա, խոստանալով, որ եթէ իրանց ձեռքը լինի հոգաբարձութեան պաշտօնը, և տէր-Ս. Շ.-ը դուրս գայ նորաշէն մեծ դասատնից, այն ատենը ուսումնարանը կունենար երկու դասատուն՝ պատրաստական և առաջին, որոնք նրանց շնորհիւ պէտք է համապատասխանէին Կարապետեան կամ նահանգական ուսումնարանին: Տէր-Ս.Շ.-ի պաշտօնից հրաժարվելուց յետոյ, ինչպէս որ երազում էին, հոգաբարձութիւնը անցաւ յիշեալ պարոններից երկուսի ձեռքը: Նոքա աշակերտների թիւը հասցրին մինչև 30-ը և նստացրին յիշեալ փոքր և հնաշէն դասատնում, ուրեղ, իմ կարծիքով, 15 աշակերտից աւելի չէր կարելի տեղաւորել. իսկ նորաշէն և մեծ ուսումնարանը զինուորանոց արին նոր հոգաբարձուները, որից ստացած փողերը պէտք է ուսուցչի ռոճիկ տան: (Որովհետև ուսումնարանը գտնվում է եկեղեցու գաւթում, այդ պատճառով զինուորները պարապում են մարմնամարզութեամբ նոյն գաւթի մէջ.) Այս առաջին անգամն է, որ այստեղ և գուցէ ուրիշ հայաբնակ քաղաքներում ևս, հայոց եկեղեցու գաւիթը ծառայէր որպէս զինուորների մարմնամարզութեան տեղ: Կիրակի օրը, երբ երրորդ հոգաբարձու տէր-Պ. Ղ. քահանային պատահեցայ եկեղեցու գաւթում, հարցրի նրան ուսումնարանի մասին:—Ոչինչ, շատ լաւ է գնում մեր ուսումնարանը. արդէն աշակերտների թիւը մինչև 30-ի հասաւ, գուցէ մի քանի օրից եօքը աւելի շատանան, պատասխանեց մեր պատուելին. իսկ ուսումնարանի փոքրութիւնը, նկատեցի նորան: —Էհ, այդ էլ հաջող չէ, դորան էլ ճարը գտայ, պատասխանեց պատուելի կղերը,—հրամայեցի վարժապետին, որ նորեկները նստացնէ յատակի վրա, իսկ մնացած մեծերը հաւաքվում են դասատան երեք նստարանների վրա: Ճիշդ այսպէս են մեր գիւղական ուսումնարանները...

Վերջապէս մի խորհուրդ տուի նրան, որ նա վարձէ մի երկրորդ ուսուցիչ, որ տղայոց սովորցնէ ռուսաց լեզու և հայերէն ձայնագրութիւն, որը ամենահարկաւոր էր մեր ուսումնարանին: Նա երբ իմացաւ, որ այդ իմ ասածը գրիգորեան հոգիի վրա էր, անհամաձայնութեան նշան ցոյց տալով ասաց.—«Ո՛չ. այդ անկարելի է, մեր կաթօլիկ տղայքը ես չեմ կամենում, որ դաստիարակվին հայ ուսուցչի հովանաւորութեամբ. Նոցա պէտք է կաթօլիկ ուսուցիչ, որ «կաթօլիկ հոգի» ստանան, «կաթօլիկ հոգի»:

Ի՞նչ համոզմունք... ինչպէս երևում է, մեր ողորմելի կղերը այնպէս է համոզված, թէ կաթօլիկ հոգին կազմված է մի քանի տեսակ թանգագին նիւթերից, կամ նորա առաջադիմութեան ոգին, նրա գաղափարը աւելի լուսաւորված և զօրեղ է, ինչպէս որ իրան ոգին և գաղափարն է... Իսկ լուսաւորչական հայինը՝ այդ բանից զուրկ է...

Այդ համոզմունքը ունեն նոյնպէս մեր կաթօլիկներից ծերերը և կանանցից պառաւները: իսկ հայ-կաթօլիկ երիտասարդները այդ դասին չեն պատկանում. Նոքա հայասէր են, նոքա ազգասէր են, նոքա կրօնի խտրութիւնները մէկ տեղ թողած, ազգութեան հետևողներն են. Նոքա «Մշակ» լրագրին յարգում են, որ նա ազգասիրութիւն է քարոզում, մէկ տեղ դնելով կրօնի վէճը, մէկ խօսքով, նոքա համակրում են տասըն և իններորդ դարի գաղափարին, որը պահանջում է «լեզու», «հայրենիք» և «ազգութիւն»:

Բոլորը կերծ ու չինծու խօսքեր են, որ ժողովրդեան հաւատացնում են մեր հոգաբարձուները, թէ ուսումնարանը աղքատ է, փող չունի: Ուսումնարանը, բացի իր սեփական անշարժ կալուածքների արդիւնքից, ունէր նոյնպէս մի քանի հարիւր րուբլի զուտ փող, որով անցեալ տարվայ հոգաբարձուների առաջարկութեամբ գնվեցաւ մի տուն աղքատանոցի համար, որտեղ այժմս բնակվում է միայն մի աղքատ պառաւ կին: Հարցնում եմ այդ պարոններին. միթէ ուսումնարանի պարտաւորութիւնն է աղքատի բնակութեան տեղ տալը, կամ աղքատի կերակրելը: կարծում եմ, այդ եկեղեցու պարտաւորութիւնն է. մի և նոյն ժամանակ եկեղեցին ինքն է պարտաւոր ուսումնարանին օգնել, և ոչ թէ ուսումնարանի փողով եկեղեցու աղքատները պատսպարել կամ կերակրել: Մենք աչքի առաջ ունենք արդէն հայոց Կարապետեան և Վարդանեան ծխական ուսումնարանները, որոնց բոլոր ծախսը եկեղեցին ինքն է վճարում:

Յուսով ենք, որ նոր ընտրված հոգաբարձուները, մեծ և նորաշէն ուսումնարան կը դարձնեն տղայոց դասատունը, և եկեղեցոյ գաւիթը, փոխանակ զինուորների մարմնամարզութեան տեղ անելու, (որի վրա արդէն ժողովուրդը գանգատում է) կը դարձնեն տղայոց ճեմելիք: Նոյնպէս պէտք չէ անուշադիր թողնել և ուսումնարանի փողի կորուստը. ուսումնարանը իրաւունք ունի պահանջել նոյն գումարը եկեղեցուց, որով գնվեցաւ աղքատանոցը:

Հակ-Հասուն

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 28 հոկտեմբերի

Հաւլաբարում, անցեալ շաբաթ, իբրև հետաքրքիր՝ նորութիւն կարելի է համարել նորին բարձր սրբազնութիւն Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեանցի կարդացած քարոզը Էջմիածնեցւոց եկեղեցում, կիրակի, պատարագին, ուսման և դաստիարակութեան վերաբերութեամբ: Ժողովուրդը սովորականից շատ էր, մանաւանդ կանանց սեռից, և քարոզը շատ քաղցր տպաւորութիւն թողեց ունկնդիրների վրա: Կենդանի հրապարակական խօսքը, անուանեցէք դուք նրան քարոզ, կամ մի ուրիշ տեղ—լեկցիա, անկասկած, ամենայարմար ճանապարհը և զօրեղ զէնքն է՝ արծարծել և արթնացնել ժողովրդի մէջ մարդկային զգացմունքներ, բարձրացնել նրա մարդկային արժանաւորութիւնը, լուծել նրա առօրեայ կենսական խնդիրները, մշակել նրա ընտանեկան և հասարակական հարցերը, ցոյց տալ նրա պետական, ազգային և ընդհանուր մարդկային պարտքերը և իրաւունքները: Մանաւանդ սերնդի ուսման կրթութեան հոգսի հետ, մեր հասարակական առաջնորդների վրա դեռ մնում է հոգսը՝ այն բազմաթիւ խաւար և տգէտ շերտերի, որոնց գոյութիւնը երկար տևելով մի աններդաշնակութիւն է ներկայացնում ժամանակակից պահանջների և գաղափարների առաջ.—Նոյն իսկ մեր հասարակական առաջնորդների ինտէրեսի, նպատակի կէտից նայելով, անհրաժեշտ է տարածել այդ հին սերունդ ասված մարդոց մէջ, կենդանի խօսքով, ժամանակակից գաղափարներ, բացատրել նրան կրթութեան վերաբերութեամբ խնդիրներ և առհասարակ գիտակցական, խելացի ընթացք տալ նրա գործունէութեան, լոյս թափելով նրանց վրա, որպէս զի կարողանանք մի փոքր ներդաշնակել այն կօնցերտը, որ ուզում ենք խաղալ նրանց ժառանգների առաջ.—Այդ տեսակ կենդանի հրապարակախօսութիւնների կարևորութիւնը աւելի և աւելի է աչքի ընկնում, չը լինելով մեր մէջ «կիրակնօրեայ դպրոցներ», որտեղ մանուկ սերնդի հետ կրթվէր և չափահաս սերունդը: Մեր մէջ այդ դերը բնական է համարվում դնել հոգևորականների վրա, ես էլ համաձայն եմ. բայց միւս կողմից ծածուկ չէ ամենքիս համար, որ պատրաստ չեն դրանք, և պատրաստներն էլ արթուն չեն այդ գործում.

Մասնաւորելով Հաւլաբարի վրա, կարելի է ասել, որ այնտեղի խաւարի մէջ ծփող կարօտեալ հօտը, երկար տարիների ընթացքում զուրկ է լսել վերոյիշեալ ձևի քարոզ: Երբեմն երբեմն Հաւլաբարի քահանաների գլխում, այն էլ միայն մեծ պասին, ծնում է քարոզելու ցանկութիւնը, ներեցէք իշտահը. Ինչ է նրանց յայտնածը. մի տեղ դա սկսվում է այդպէս. «սիրելի ժողովուրդ, ինչ զանազանութիւն կայ լօբու և մսի մէջ, —և ոչինչ. ուրեմն լօբի կերէք և միս միք ուտիլ, պաս պահեցէք, այդ Աստուծոյ շատ հաւանելի է»: Մի ուրիշ անգամ քարոզի բովանդակութիւնն է. «Սիրելի ժողովուրդ, մինչև սրբանկին սալօն չը քսվի, գիտէք, որ չի պտղոյ գայ, մենք ենք ձեզ արքայութիւն տանողները, ուստի առատ առատ քսեցէք սալօնը առնակին» և խօսքն հետևում է գանհանակի թեփչին: Այս տեսակ քարոզների մէջ ժողովուրդը չը գտնելով իր ցաւերի և հոգսերի լուծումը, թափուր է թողել երկար ժամանակ եկեղեցիները: Հասկանալի է ուրեմն, թէ ինչպիսի տպաւորութիւն կարող էր թողնել սրբազանի խելացի և ազդու քարոզը՝ թէ իր բովանդակութեամբ և թէ իր ձևով: Համարելով այն օգուտները, որ ստացել է և ստանում է մարդկութիւնը լուսաւորութիւնից, սրբազանը առանձին կերպով բացատրեց մանաւանդ օրիորդների կրթութեան կարևորութիւնը՝ — անուանելով նրանց ազգի արգանդ, հիմք, արմատ: Այստեղ, օգուտ քաղելով Հաւլաբարի Ս. Մարիամեան օրիորդաց դպրոցի աշակերտուհիների ներկայութիւնից, սրբազանը մատնացոյց հանդիսականներին այս քաղցր տպաւորութիւնները, որ թողել էին իր վրա, քարոզի նախկին օրը, դպրոցի սանուհիները իրանց խելացի պատասխաններով և յառաջադիմութեամբ, որոնք նրա խօսքով «մի վարդ էին բացել իր սրտում»:—Քարոզի տպաւորութիւնը և ազդեցութիւնը զգալի եղաւ, մանաւանդ երկու առանձնութիւններով լեզւով, որ մատչելի, հասարակախօս էր, և միւս կողմից՝ չոր ու ցամաք վկայութիւնների ու կանոնների տեղ,—գործնական օրինակների և զուգմունքների ներածութեամբ. ձայնը մի փոքր թոյլ էր, թէպէտ այդ դիպուածքում ամենին լսելի էր: Ցանկալի է, որ սրբազանը շարունակէր իր բռնած ընթացքը, որի համար նա օրըստօրէ աւելի և աւելի վայելում է Թիֆլիսի հասարակութեան սէրը և համակրութիւնը: Եկեղեցուց դուրս գալով, ամեն անհատ, քարոզի օրը տարաւ իր տուն մի մի թանգագին միտք բարոյական մխիթարութեան հետ. բայց մտաւ արդեօք այնտեղի փարիսեցւոց կերպարանքով չարված աբեղաների մանց գլխումը մի խօսք անգամ,—կասկածում ենք...

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Շուշի, 12 նոյեմբերի

Նորերս «Դրօշակի» մէջ լուր է հաղորդված Շուշուց, իբրև թէ այն տեղի հայոց օրիորդաց դպրոցի մի նորեկ ուսուցիչ վերին աստիճան անբարոյական է.

Եթէ «Դրօշակը» չէ ցանկանում, որ մի գաւառական հայոց դպրոց անդառ դատապարտվի, ապա հրաւիրում եմ նրան, որ աւելի փաստերով խօսէ մեր ուսումնարանի վրա և մանաւանդ հասցէն ճշտութեամբ նշանակէ.

Շատ ժամանակ չէ, տէր, որ ցոյց էի տուել, թէ մեզանում այստեղ կան մարդիկ, որոնք շատ կը ցանկային, որ մեր թէ տղայոց և թէ օրիորդաց դպրոցների վրա քարեր նետուէին, այն էլ ծածուկ անկիւններից, որովհետև յայտնապէս նոցա հակառակ հանդիսանալու միջոց չունեն:

Ե՞րբ պէտք է վերջանայ վատ գրպարտութիւնը և լրագիրները մանր կրքերին ծառայեցնելը՝ «Դրօշակին» միայն այսքան կարող եմ պատասխանել, թէ շատ ափսոսում եմ, որ նորա թղթակիցը այս անգամ նորան չարաչար մոլորեցրել է. թող փորձէ և այս կը ստուգվի: Եւ նորա արդարադատութեան դիմելով՝ խնդրում եմ, որ այս նամակը արտատպէ.

Տեսուչ Ղարաբաղու թեմական դպրոցի և
օրիորդաց ազգային-հոգևոր դպրոցի
Ս. Մանդինեանց